

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ESAC
"Environmental Sustainability
Assistance Center" NGO



Implemented by
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Մոցիալ-տնտեսական ուսումնասիրություն Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի պիլոտային համայնքներում ջերուցման համար օգտագործվող էներգիայի և դրան առնչվող հարցերի վերաբերյալ



Հաշվետվություն
մայիս 2021թ.

Համառոտագիր

«Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ECOserve) ծրագիրն իրականացվում է ԳՄՀՀ-ի կողմից Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի և էկոնոմիկայի նախարարությունների հետ համատեղ: Հայաստանում ծրագրի նպատակն է բարելավել արտավայրերի և խոտհարքների կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ կառավարման նախադրյալները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերի բնակչության էներգետիկ անվտանգությանը:

Գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունները (SS) ջեռուցման նպատակով վառելիքայտի մեծ պահանջարկը Հայաստանում հանգեցրել է անտառների դեգրադացիային և անտառազրկմանը: Հաճախ որպես այլընտրանք օգտագործվում է գոմաղբը, որն այլ պարագայում կարող էր օգտագործվել որպես կարևոր օրգանական պարարտանյութ: Ներկայիս ջեռուցման պրակտիկան և բնական պաշարների օգտագործման հետ կապված մոտեցումներն առաջ են բերում տարբեր խնդիրներ և անհարմարություններ ընտանիքների, այդ թվում կանանց համար:

Այս սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունն իրականացվել է ECOserve ծրագրի շրջանակում՝ գյուղական SS-ների էներգետիկ վարքը վերհանելու և վերլուծելու նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ջեռուցման էներգիային, որը կապված է բնական պաշարների, մասնավորապես վառելիքայտի ու գոմաղբի օգտագործման հետ: Հատուկ նպատակ էր վերհանել հարցման թեմաներին վերաբերող հնարավոր գենդերային ասպեկտները: Ուսումնասիրությունը ներառել է ջեռուցման վառելիքի և սարքերի խնդիրները, մոտեցումները, նախընտրությունները, այլընտրանքներն ու առնչվող թեմաները, կարիքներն ու առաջնահերթությունները, սոցիալ-տնտեսական ասպեկտները, ինչպես նաև ջեռուցման էներգիայի հետ կապված գենդերային և առողջական խնդիրները: Ուսումնասիրությունն իրականացվել է ECOserve-ի էներգիայի բաղադրիչի պիլոտային համայնքների 5 խմբերում Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում: Ուսումնասիրությանը մասնակցել է 380 հարցվող, որոնք օգտագործում են վառելիքայտը որպես ջեռուցման համար հիմնական վառելիք, դրանց ավելի քան 50%-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչներ: Մեթոդաբանությունը ներառել է հարցումներ անհատական հարցաթերթիկներ և ֆոկլորային խմբերի քննարկումներ: Հարցման արդյունքներն ու առաջարկությունները օգտագործվել են ECOserve-ի էներգիայի պիլոտային և իրազեկման բարձրացման գործողությունները պլանավորելու և ճշգրտելու նպատակով:

Ուսումնասիրությունն իրականացվել է ԳՄՀՀ Հայաստանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի՝ Հակոբյան բնապահպանական կենտրոնի և Հոհենհայմի համալսարանի միջև համագործակցությամբ՝ ECOserve և GAtES ծրագրերի շրջանակում: «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ՀԿ-ն (ESAC) ներգրավված է եղել հարցման բոլոր աշխատանքներում, իրականացրել է դաշտային տվյալների հավաքագրումը, տվյալների վերլուծությունն ու պատրաստել սույն ամփոփ գեկույցը:

Ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները ցույց են տալիս, որ հարցված գյուղական համայնքներում վառելիքայտն ու գոմաղբը լայնորեն օգտագործվում են որպես ջեռուցման վառելիք: Անտառամերձ համայնքներում վառելիքայտն ավելի շատ է օգտագործվում, իսկ գոմաղբը՝ ավելի քիչ: Տների ջերմամեկուսացման մակարդակը շատ ցածր է: Վառելիքայտն ու գոմաղբը որպես ջեռուցման վառելիք ընտրելու հիմնական գործոններն են մատչելիությունը, այլընտրանքի բացակայությունը և հասանելիությունը: Ջեռուցման նպատակով ծղոտի բրիկետների օգտագործումը տնային տնտեսության մակարդակում շատ սահմանափակ է: Հարցվողները տարբեր եղանակներով հնարավորինս խնայում են վառելիքը: Ջեռուցման պրակտիկաներն ավելի կայուն մոտեցումներով չփոխարինելու հիմնական պատճառը ջեռուցման համակարգը փոխելու կամ այլընտրանքային վառելիքի անցնելու նպատակով սկզբնական ներդրում կատարելու համար ֆինանսական ռեսուրսների բացակայությունն է, ինչպես նաև վստահելի տեղեկատվության բացակայությունը:

Վառելիքայտով և գոմաղբով ջեռուցումը որոշակի անհարմարություններ է առաջացնում SS-ների համար, ներառյալ վառելիքի պատրաստումը/ պահեստավորումը և ջեռուցման ապահովման աշխատանքները: Տղամարդիկ ավելի շատ են զբաղվում ջեռուցման սարքի ապահովման հարցերով,

քան կանայք, սակայն վերջիններս ավելի շատ ժամանակ են ծախսում ջեռուցման ապահովման աշխատանքների վրա: Տղամարդիկ ավելի շատ են զբաղվում վառելափայտի պատրաստման և պահեստավորման հարցերով և մի փոքր ավելի շատ ժամանակ են դրան տրամադրում, քան կանայք: Կանայք տղամարդկանց չափ գրեթե հավասար ներգրավված են գոմաղբի պատրաստման ու պահեստավորման աշխատանքներում: Ըստ հարցվողների՝ գոմաղբի պատրաստումը շատ աշխատատար և ժամանակատար գործ է: Մարդու առողջության վրա ազդեցության տեսանկյունից հարցվողները հիմնականում կարծում են, որ վառելափայտի օգտագործումն ավելի քիչ ազդեցություն ունի մարդու առողջության վրա, քան գոմաղբի օգտագործումը: Ընդհանուր առմամբ, տղամարդիկ գտնում են, որ վառելափայտն ու գոմաղբն ավելի շատ բացասական ազդեցություն ունեն մարդու առողջության վրա, իսկ կանանց կարծիքով՝ ավելի քիչ: Սակայն վերջիններս ավելի շատ են կարևորում վառելիքի մաքուր ու առողջության համար անվտանգ լինելը: Վառելափայտով/գոմաղբով ջեռուցման հետ կապված ամենահաճախ հանդիպող առողջական խնդիրներն են շնչուղիների և աչքերի գրգռումը, որոնց հաջորդում են թոքային հիվանդություններն ու մաշկի գրգռման հետ կապված խնդիրները:

Հարցվողների մեծամասնությունը ցանկություն է հայտնել մասնակցել իրենց տանը կամ համայնքում էներգաարդյունավետության վերաբերյալ խմբային քննարկումներին: Շատ հարցվողներ հետաքրքրված են էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաներով, տղամարդկանց մոտ այդ հետաքրքրությունը մի փոքր ավելի շատ է, քան կանանց մոտ: Մինչդեռ շատերն առաջիններից չեն, որ կիրառում են էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաները: Հարցված գրեթե բոլոր տղամարդիկ մասնակցում են իրենց ընտանիքներում էներգիայի վերաբերյալ որոշումների կայացմանը, կանանց մասնակցությունն ավելի քիչ է:

Հետևաբար, անհրաժեշտ են հասանելի և մատչելի այլընտրանքային վառելիք և արդյունավետ ջեռուցման սարքեր՝ գյուղական բնակավայրերում վառելափայտի և գոմաղբի օգտագործումը նվազեցնելու համար: Անհրաժեշտ է ունենալ մատչելի ֆինանսավորում և ֆինանսական մեխանիզմներ՝ գյուղական բնակչությանը խրախուսելու իրենց SS-ներում անցում կատարել էներգաարդյունավետությանն ու այլընտրանքային էներգիային: Գյուղական բնակչության ցածր եկամուտ ունեցող հատվածի համար պետք է կիրառվի տարբերակված մոտեցում: Իրազեկության բարձրացումն ու հզորությունների ստեղծումը պետք է լինեն գյուղական էներգիայի գործողությունների կարևոր բաղադրիչները, որոնք պետք է հիմնված լինել փորձված և հուսալի տեղեկատվության և հաջողված օրինակների վրա, որպեսզի ընդօրինակվեն: Էներգիային առնչվող հարցերի շուրջ կանանց իրազեկելն ու կրթելը կարող է ազդեցություն ունենալ տնային տնտեսության և համայնքային մակարդակում: Էներգաարդյունավետությանն ու այլընտրանքային էներգիայի խթանմանն ու վառելափայտի/գոմաղբի օգտագործման նվազեցմանն ուղղված գործողություններն ենթադրում են օգուտներ ընտանիքների և մասնավորապես կանանց համար: Հետևաբար, պետք է ուսումնասիրվեն ու օգտագործվեն բոլոր հնարավորությունները՝ կոշտ կենսավառելիքով ներկայիս ջեռուցման պրակտիկաներին վերաբերող կենցաղային բեռը նվազեցնելու համար:

Բովանդակություն

Համառոտագիր	1
1. Ներածություն	4
2. Նպատակն ու մեթոդաբանությունը	4
3. Հարցման հիմնական արդյունքները	6
3.1 Համայնքների և հարցվողների ընդհանուր նկարագիր	6
3.2 Բնակչության պայմանները	9
3.3 Վառելիք և ջեռուցման սարքեր	11
3.4 Հարցվողների կարծիքը ջեռուցման և վառելիքի տեսակների՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ	21
3.5 Տեղեկացվածություն, որոշումների կայացում, նոր տեխնոլոգիաներ	25
4. Հիմնական եզրակացություններ ու առաջարկներ	28
4.1 Եզրակացություններ	28
4.2 Առաջարկություններ	31
Հավելված 1. Հարցվողների կարծիքը ջեռուցման համար վառելիքի տարբեր տեսակների օգտագործման վերաբերյալ՝ ըստ համայնքների	32

1. Ներածություն

«Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ECOServe) ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀՀ) կողմից գործընկեր նախարարությունների՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ: Հայաստանում ծրագրի նպատակն է բարելավել արոտավայրերի և խոտհարքների կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ օգտագործման պայմանները՝ հաշվի առնելով գյուղական բնակչության էներգետիկ անվտանգությունը:

Վերջին տարիներին իրականացված տարբեր ուսումնասիրությունները և վիճակագրությունը ցույց են տալիս, որ հատկապես գյուղական բնակավայրերում վառելիքայտը լայնորեն օգտագործվել է որպես վառելիք՝ տնային տնտեսությունները (SS) ջեռուցելու համար: Վառելիքայտի մեծ պահանջարկը Հայաստանում հանգեցնում է անտառների դեգրադացիային և անտառազրկմանը: Հաճախ որպես այլընտրանք օգտագործվում է գոմաղբը, որն այլ պարագայում կարող էր օգտագործվել որպես կարևոր օրգանական պարարտանյութ: Որոշ ուսումնասիրություններ նշում են, որ կիրառվող ջեռուցման մոտեցումներն առաջացնում են տարբեր խնդիրներ և անհարմարություններ SS-ների, այդ թվում կանանց համար (Ա. Փատյան, Ն. Սաքանյան, Էներգիայի պահանջարկը, առաջարկն ու արդյունավետությունը Հայաստանի գյուղական բնակավայրերում. հիմնական տվյալների հավաքագրում և վերլուծություն, 2019 թ., ԷԿՈՍԵՐՎԻ շրջանակներում:

Այս սոցիալ-տնտեսական ուսումնասիրության նպատակն էր բացահայտել գյուղական համայնքներում տնային տնտեսություններում ջեռուցման էներգիայի խնդիրները՝ կապված բնական պաշարների օգտագործման հետ և հատուկ ուշադրություն հատկացնելով գենդերային խնդիրներին: Հարցումը ներառել է Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի ընտրված համայնքները, որոնք հանդիսանում են ECOServe ծրագրի՝ էներգիայի պիլոտային միջամտության բաղադրիչի պիլոտային համայնքները:

Այս հարցումն իրականացվել է ԳՄՀՀ հայաստանյան գրասենյակի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի և Հոհենհայմի համալսարանի միջև համագործակցությամբ՝ ECOServe և GAtES ծրագրերի շրջանակում: «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ՀԿ-ն (ՇՄԿԱԿ) ներգրավված է եղել ուսումնասիրության բոլոր աշխատանքներում:

Ուսումնասիրության բոլոր գործընկերները ներգրավված են եղել հարցման նախապատրաստական՝ ներառյալ հարցաթերթիկների մշակման աշխատանքներում: Դաշտային տվյալների հավաքագրումը, դրանց վերլուծությունն ու ամփոփ գեկույցի պատրաստումն իրականացվել են ՇՄԿԱԿ ՀԿ-ի կողմից: Աշխատանքներն իրականացրել է ՇՄԿԱԿ -ի փորձագետների թիմը. Տիգրան Մկրտչյան (գ.թ., թիմի ղեկավար), Դավիթ Իսկանդարյան (գ.թ., ավագ հետազոտող, գեկույցի համահեղինակ), Արևիկ Համբարձումյան (հարցումների և ֆոկուսային խմբերի քննարկումների համակարգող, գեկույցի համահեղինակ), Հրաչյա Հարությունյան (հարցումների և ֆոկուսային խմբերի քննարկումների համակարգող) և դաշտային հարցազրուցավարներ Լիանա Հարությունյան, Դավիթ Դավթյան, Կարեն Տոնոյան, Լենա Մարգարյան: Սիրանուշ Գալստյանը (ECOServe ծրագրի խորհրդատու) ընդհանուր համակարգել և օժանդակել է հարցման նախապատրաստման և իրականացման աշխատանքները, ինչպես նաև օժանդակել է տվյալների վերլուծությանը ու գեկույցի մշակման աշխատանքներին: Հավաքագրված դաշտային տվյալները տրամադրվել են Հոհենհայմի համալսարանի մագիստրոս Ալիսա Բոուզիին՝ «Հայաստանում էներգիայի հետ կապված մշակույթներն ու դրանց կապը գենդերի և բնական պաշարների հետ» թեմայով իր մագիստրոսական թեզի համար օգտագործելու նպատակով:


2. Նպատակն ու մեթոդաբանությունը

Սույն սոցիալ-տնտեսական ուսումնասիրության նպատակն է վերհանել ու վերլուծել գյուղական SS-ների էներգետիկ վարքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ջեռուցման էներգիային, որը կապված է բնական պաշարների, մասնավորապես վառելիքայտի ու գոմաղբի օգտագործման հետ: Այն

նպատակ ունենալ վերհանել հարցման թեմաներին վերաբերող հնարավոր գենդերային ասպեկտները: Ուսումնասիրությունը ներառել է ջեռուցման վառելիքի խնդիրները, մոտեցումները, նախընտրությունները, այլընտրանքներն և առնչվող թեմաները, մասնավորապես վառելավիայտի/գոմաղբի և վառելիքի այլ տեսակների օգտագործումը, ՏՏ-ների նախընտրությունները ջեռուցող սարքերի և մեթոդների հարցում, ջեռուցման վառելիքի և մեթոդների ընտրության վրա ազդող գործոնները, կարիքներն ու առաջնահերթությունները, սոցիալ-տնտեսական ասպեկտները, ինչպես նաև ջեռուցման էներգիայի հետ կապված գենդերային և առողջությանն առնչվող խնդիրները:

Հարցումը ներառել է ECOserve-ի էներգիայի բաղադրիչի 5 պիլոտային համայնքային խմբերը Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում (տե՛ս քարտեզ 1):

Քարտեզ 1. Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում հարցմանը մասնակցած համայնքները



Համայնքների խմբերն ընտրվել են երկու հիմնական չափանիշների հիման վրա՝ հեռավորությունը անտառից և այլընտրանքային վառելիքի (ծղոտե բրիկետներ) հասանելիությունը: Լոռու մարզի Գյուլագարակ և Լոռուի Բերդ խոշորացված համայնքներն անտառամերձ են: Կոտայքի մարզի Եղվարդ խոշորացված համայնքը, Շիրակի մարզի Ախուրյան խոշորացված համայնքը և 5 չխոշորացված համայնքների խումբը (Սարալանջ, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Նահապետավան և Հատիճ) հեռու են գտնվում անտառներից: Եղվարդ (Կոտայքի մարզ) և Ախուրյան (Շիրակի մարզ) համայնքներում կան բրիկետավորման արտադրամասեր, Ախուրյանի արտադրամասը սկսել է գործել 2020 թ. օգոստոսից: Շիրակի մարզի 5 չխոշորացված համայնքները («Սարալանջ» խումբ) մոտիկ են գտնվում Ախուրյանի բրիկետավորման արտադրամասին:

Ուսումնասիրության թիրախն են հանդիսացել այն հարցվողները, որոնք որպես ջեռուցման հիմնական վառելիք օգտագործում են վառելավիայտ: Հարցումն ուղղված էր մեծահասակներին և նպատակ ունենալ ներգրավել գրեթե հավասար թվով տղամարդ և կին հարցվողներ: Հարցվողների սկզբնական ցուցակները ստացվել են համայնքապետարանների միջոցով, որոնց հիման վրա նախաընտրվել են հարցվողները՝ վերոնշյալ չափանիշների համաձայն:

Ուսումնասիրությունը ներառել է հարցումներ՝ անհատական հարցաթերթիկներով և ֆոկլուսային խմբերի քննարկումներով: Անհատական հարցաթերթիկները բաղկացած էին բազմակի ընտրությամբ հարցերից, իսկ ֆոկլուսային խմբերի հարցաթերթիկը ներառում էր թեմային առնչվող բաց հարցեր: Հարցման նախապատրաստման փուլում երկու հարցաթերթիկներն էլ առանձին-առանձին

փորձարկվել են տղամարդկանց և կանանց խմբերի հետ և, համապատասխանաբար, ճշգրտվել են լեզվի, տևողության և այլ տեխնիկական մանրամասների առումով:

Հարցումը բաղկացած էր երկու մասից: Առաջին մասում հարցվողներն անանուն լրացրել են տպագիր անհատական հարցաթերթիկը (անհրաժեշտության դեպքում վարողի կողմից հարցերի պարզաբանմամբ): Երկրորդ մասը ֆոկուսային խմբի՝ վարողի կողմից անցկացվող քննարկման ձևաչափով էր և հիմնված էր հարցաթերթիկի վրա:

Անհատական հարցաթերթիկները լրացրած հարցվողներն այնուհետև մասնակցել են ֆոկուսային խմբի քննարկումներին: Անհատական հարցաթերթիկի լրացումը ու ֆոկուսային խմբի քննարկումները կազմակերպվել են առանձին-առանձին կանանց և տղամարդկանց խմբերի համար: Ֆոկուսային խմբի քննարկումները ձայնագրվել են ձայնագրիչով և օգտագործվել են ֆոկուսային խմբի նկարագրություններն ամփոփելու նպատակով:

Սույն զեկույցի Գլուխ 3-ում ներկայացվում է բոլոր 5 պիլոտային համայնքների խմբերում անհատական հարցումների (քանակական տեղեկություն) ու ֆոկուսային խմբի քննարկումների (որակական տեղեկություն) ամփոփումն ու վերլուծությունը: Հիմնական եզրակացությունները ներկայացվում են Գլուխ 4-ում:

3. Հարցման հիմնական արդյունքները

3.1 Համայնքների և հարցվողների ընդհանուր նկարագիր

Խոշորացված և չխոշորացված պիլոտային համայնքների կազմում գտնվող ընդհանուր թվով 35 բնակավայրերից հարցմանը մասնակցել են հարցվողներ 31 բնակավայրերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հարցմանը մասնակցած համայնքներ և բնակավայրեր

Համայնք	Տարածք, բնակչություն	Հիմնական զբաղմունք	Բնակավայրեր
Լոռու մարզ			
Գյուլագարակ խոշորացված համայնք	15.52 կմ ² , 2317 մարդ	Կարտոֆիլի, եգիպտացորենի և հատապտուղների մշակում, անասնաբուծություն	Գյուլագարակ
			Գարգառ
			Հոբարձի
			Կուրթան
			Վարդաբլուր
			Ամրակից
Լոռի Բերդ խոշորացված համայնք	408.4 հա կմ ² , 5691 մարդ	Կարտոֆիլի, եգիպտացորենի և բանջարեղենի մշակում, անասնաբուծություն	Պուշկինո
			Լոռի Բերդ
			Լեջան
			Ագարակ
			Կողես
			Յաղդան
			Բովաձոր
			Ուռուտ
Սվերդլով			
Կոտայքի մարզ			
Եղվարդ խոշորացված համայնք	206 կմ ² 25588 մարդ	Եգիպտացորենի ու անասնակերի մշակում, այգեգործություն, հատապտուղների մշակում, անասնաբուծություն	Զորավան
			Արագյուղ
			Սարալանջ*
			Բուժական*
<i>Նշում. Եղվարդ և Զովունի բնակավայրերը չեն ընդգրկվել հարցման մեջ, քանի որ դրանց ՏՏ-ների մեծ մասն</i>			

օգտագործում է գազ			
Շիրակի մարզ			
Ախուրյան խոշորացված համայնք <i>Նշում. Ախուրյան բնակավայրը չի ներառվել հարցման մեջ, քանի որ դրա ՏՏ-ների մեծ մասն օգտագործում է գազ</i>	21,287.54 կմ ² 17520 մարդ	Անասնաբուծություն, եգիպտացորենի, կարտոֆիլի ու անասնակերի մշակում	Այգաբաց Արևիկ Բասեն* Կամո Կառնուտ Հովիտ Ջրառատ*
Սարալանջ	19.3 կմ ² 1037 մարդ	Անասնաբուծություն, եգիպտացորենի, կարտոֆիլի, անասնակերի ու բանջարեղենի մշակում	
Մեծ Մանթաշ	27.6 կմ ² 2189 մարդ		
Փոքր Մանթաշ*	8.9 կմ ² 2320 մարդ		
Հառիճ	149.5 կմ ² 1930 մարդ		
Նահապետավան	72,79 հա 830 մարդ		

* Գազի մատակարարում չունեցող համայնքներ, Փոքր Մանթաշ՝ մասնակի գազամատակարարում:


380 հարցվողների ցանկը ներառել է 193 իգական և 187 արական սեռի հարցվող: Յուրաքանչյուր բնակավայրից հարցումներին մասնակցել է 10-15 գրեթե հավասար թվով արական և իգական սեռի հարցվող:

Աղյուսակ 2. Հարցվողների բաշխվածությունն ըստ համայնքների, բնակավայրերի և սեռի


Բնակավայր	Հարցվողների թիվը		Հարցվողների միջին տարիքը	Սեռային բաշխվածությունն ըստ բնակավայրերի				Սեռային բաշխվածությունը յուրաքանչյուր բնակավայրում		
		Տեսակաբար կշիռ		Իգական	Տեսակաբար կշիռ	Արական	Տեսակաբար կշիռ	Իգական	Արական	Ընդամենը
Ախուրյան	86	22.6%	44.3	45	23.3%	41	21.9%	52.3%	47.7%	100%
«Սարալանջ» խումբ	83	21.8%	47.3	36	18.7%	47	25.1%	43.4%	56.6%	100%
Գյուլագարակ	81	21.3%	42.2	43	22.3%	38	20.3%	53.1%	46.9%	100%
Եղվարդ	46	12.1%	42.1	28	14.5%	18	9.6%	60.9%	39.1%	100%
Լոռի Բերդ	84	22.1%	45.7	41	21.2%	43	23.0%	48.8%	51.2%	100%
Ընդամենը	380	100%	44.3	193	100%	187	100%	50.8%	49.2%	100%

Կրթական մակարդակի վերլուծությունն ըստ սեռի ցույց է տալիս, որ իգական սեռի հարցվողների 32.6%-ը և արական սեռի հարցվողների 33.7%-ն ունի բարձրագույն կրթություն: Իգական սեռի հարցվողների 39.4%-ը և արական սեռի հարցվողների 46%-ն ունի միջնակարգ կրթություն: Իսկ միջին մասնագիտական կրթություն ունի իգական սեռի հարցվողների 28%-ը և արական սեռի հարցվողների 20.3%-ը:

Գծապատկեր 1. Հարցվողների կրթական մակարդակն ըստ սեռի




Գծապատկեր 2. Հարցվողների կրթական մակարդակն ըստ համայնքների



Հարցման շրջանակում հարցվողները կարող էին մատնանշել իրենց ընտանիքների եկամտի մինչև երեք աղբյուր: Վերլուծությունը ցույց տվեց, որ ամենահաճախ պատահող եկամտի աղբյուրներն են անասնաբուծությունը, կարտոֆիլի մշակումն ու համայնքային/պետական աշխատանքը: Ստորև բերված գծապատկերում ցույց է տրված ստացված բոլոր պատասխանների ընդհանուր թիվը և եկամտի յուրաքանչյուր աղբյուրի տարածվածության աստիճանը:


Գծապատկեր 3. Եկամտի աղբյուրն ըստ հարցվողների



Եկամտի առաջին աղբյուրի վերլուծությունը ցույց է տալիս, որ անասնապահությունը կրկին ամենատարածված զբաղմունքն է (47.4%), որին հաջորդում են համայնքային/պետական


աշխատանքը (19.7%) և կարտոֆիլի մշակումը (11.1%): Կարտոֆիլի մշակումն ամենաբարձր ցուցանիշն ուներ «Սարալանջ» համայնքային խմբում և Գյուլագարակում, իսկ արտագնա աշխատանքից և բիզնեսից եկամուտի ստացումն ամենաբարձր ցուցանիշներն ունեն Գյուլագարակում, Լոռի Բերդում ու Եղվարդում:

Գծապատկեր 4. Եկամտի աղբյուրը՝ առաջին պատասխան



Ստորև բերված գծապատկերում ներկայացվում է հարցմանը մասնակցած հարցվողների եկամտի չափը ըստ համայնքների:

Գծապատկեր 5. Տնային տնտեսությունների եկամտի չափը



3.2 Բնակության պայմանները

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հարցվողների 90.3%-ը բնակվում է քարե տներում, իսկ 8.7%-ը՝ ժամանակավոր տնակներում, հանդիպել է բազմաբնակարանային շենքերում բնակության մի քանի դեպք:

Աղյուսակ 3. Հարցվողների բնակության պայմանները

Համայնք	Բազմաբնակարանային շենք	Ժամանակավոր տնակ	Մասնավոր քարե տուն	Ընդամենը
Ախուրյան	1.2%	5.8%	93.0%	100%
«Սարալանջ» խումբ	0.0%	0.0%	100.0%	100%
Գյուլագարակ	0.0%	13.6%	86.4%	100%
Եղվարդ	0.0%	2.2%	97.8%	100%
Լոռի Բերդ	3.6%	19.1%	77.4%	100%
Ընդամենը	1.1%	8.7%	90.3%	100%

Այս առումով կարևորում ենք դիտարկել հարցվողների տների ընդհանուր և ջեռուցվող մակերեսների վերլուծությունը, որն անմիջականորեն կապված է ձմռան ամիսներին հարցվողների ընթացիկ ծախսերի հետ:

Աղյուսակ 1. Հարցվողների տան մակերեսը, ջեռուցվող մակերեսը և ընտանիքի անդամների քանակը

Բնակավայր	Տան մակերեսը, միջին, քմ	Ձմռանը ջեռուցվող մակերեսը, միջին, քմ	Ձմռանը ջեռուցվող մակերեսն , ընդհանուր մակերեսի %	Ընտանիքի անդամների քանակը, միջինացված ցուցանիշ
Ախուրյան	131.0	105.7	80.7%	4.6
«Սարալանջ» խումբ	148.8	96.4	64.8%	5.0
Գյուլագարակ	108.9	78.3	71.9%	4.7
Եղվարդ	157.7	119.1	75.5%	5.2
Լոռի Բերդ	113.5	70.7	62.2%	4.6

Ինչպես երևում է աղյուսակից, համայնքի հարցվողները բնակվում են համեմատաբար մեծ ընտանիքներով՝ միջինում 4.5 անձ պայմանական ցուցանիշով: Ձմռանը ընթացքում հարցվողները ջեռուցում են իրենց տան 62-81%-ը:

Ստորև ներկայացվող աղյուսակից երևում է, որ տներում ամենահաճախ ջերմամեկուսացվող հատվածներն են լուսամուտները, ապա՝ առաստաղը:

Աղյուսակ 5. Ջերմամեկուսացումն ըստ համայնքների

	Ախուրյան	«Սարալանջ» խումբ	Գյուլագարակ	Եղվարդ	Լոռի Բերդ	Ընդամենը
Առաստաղ	27	27	22	16	23	115
Պատեր	7	1	9	3	6	26
Լուսամուտներ	40	37	28	18	25	148
Դռներ	1	0	0	0	1	2
Այլ	0	0	2	0	1	3


Պետք է նշել, որ 380 հարցվողներից մոտ 22%-ի տներում բացակայում է ցանկացած տեսակի ջերմամեկուսացում, հարցվողների ավելի քան 36%-ը նշել է, որ ջերմամեկուսացված է տան միայն մեկ բաղադրիչը, մոտ 26%-ը՝ 2 բաղադրիչը, մոտ 11%-ը նշել է 3 բաղադրիչի ջերմամեկուսացվածության մասին և հարցվողների միայն 4%-ն է նշել, որ միաժամանակ ջերմամեկուսացված են տան չորս բաղադրիչ:

Աղյուսակ 6. Ջերմամեկուսացման մակարդակը

Ջերմամեկուսացում	1 բաղադրիչ	2 բաղադրիչ	3 բաղադրիչ	4 բաղադրիչ	Ջերմամեկուսացված չէ	Ընդամենը
Հարցվողների թիվը	138	99	43	15	85	380
Տոկոսը	36.3%	26.1%	11.3%	3.9%	22.4%	100%

Հարցվողների միայն կեսն է բավարարված տան ներսի ջերմաստիճակով, իսկ մոտ 15%-ն ընդհանրապես բավարարված չէ:


Գծապատկեր 6. Տան ջեռնաստիճանից բավարարվածության մակարդակը




**3.3 Վառելիք և ջեռուցման սարքեր
Ջեռուցման համար օգտագործվող վառելիք**

Հարցման շրջանակներում հարցվողները կարող էին նշել ջեռուցման համար օգտագործվող վառելիքի մինչև երեք տարբերակ՝ ըստ վառելիքի տեսակների առաջնահերթության: Վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվողների գրեթե 96%-ը ջեռուցման համար որպես վառելիք օգտագործում է վառելափայտ, իսկ 66%-ը՝ գոմաղբ (շատ հարցվողներ օգտագործում են երկուսն էլ): Հարցվողների 72.6%-ն օգտագործում է վառելափայտը որպես ջեռուցման առաջնային տարբերակ, իսկ 23%-ը՝ որպես երկրորդ և երրորդ տարբերակներ: Տան ջեռուցման համար որպես առաջնային տարբերակ գոմաղբ են օգտագործում հարցվողների 20.5%-ը, իսկ 45.5%-ն օգտագործում է այն որպես երկրորդ և երրորդ տարբերակներ: Հարցվողների 18%-ը որպես տան ջեռուցման վառելիք օգտագործում է գազ, հարցվողների գրեթե 6%-ն օգտագործում է գազը որպես տան ջեռուցման համար առաջնային տարբերակ՝ հաճախ համակցելով այն վառելափայտի և գոմաղբի օգտագործման հետ, իսկ հարցվողների 12%-ը օգտագործում է գազը որպես երկրորդ կամ երրորդ տարբերակներ:

Գծապատկեր 7. Վառելիքի տեսակների օգտագործումը որպես ջեռուցման համար հիմնական կամ րացուցիչ տարբերակ



Գծապատկեր 8. Վառելափայտի և գոմաղբի օգտագործումը տան ջեռուցման համար որպես առաջնային տարբերակ՝ ըստ համայնքների




Վերլուծությունը ցույց տվեց, որ կոշտ կենսավառելիք օգտագործողների շրջանում վառելիքայտը համարվում է առաջնային տարրերակ բոլոր համայնքներում, բացառությամբ Ախուրյան համայնքի: Վառելիքայտի օգտագործման ցուցանիշը Ախուրյանում կազմել է 47%, իսկ մյուս այլ համայնքներում՝ ավելի քան 70%, ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գյուլագարակում՝ 91.4%: Գոմաղբը նույնպես հաճախ է օգտագործվում, հատկապես Ախուրյան համայնքում (46.5%), «Սարալանջ» խումբում (19.3%) և Եղվարդ համայնքում (19.6%), ինչը պայմանավորված է այդ համայնքներում լայնորեն տարածում գտած անասնապահությամբ: Հետաքրքիր է, որ անտառամերձ համայնքներում գոմաղբի կիրառումն ավելի քիչ նախընտրելի է՝ Գյուլագարակում այն կազմել է 4.9%, իսկ Լոռի Բերդում՝ 10.7%: Համայնքների կողմից ջեռուցման համար օգտագործվող տարբեր վառելիքի տեսակների համամասնությունները, ըստ հարցվածների, ներկայացված են հավելված 1-ում:

Մնունդ պատրաստելու և կենցաղային ջրի տաքացման համար օգտագործվող վառելիքը

Հարցվողները կարող էին նշել սնունդ պատրաստելու և կենցաղային ջրի տաքացման համար օգտագործվող վառելիքի մի քանի տարրերակներ:


Ջեռուցման սեզոնի ընթացքում հարցվողները սնունդ պատրաստելու համար առավել հաճախ օգտագործում են գազ (72.9%): Հարցվողների կողմից ամենաշատն օգտագործվող երեք վառելիքի տեսակների ընտրության համատեքստում ևս առաջնային դերը պատկանում է գազին:

Գծապատկեր 8. Հարցվողների կողմից ջեռուցման սեզոնի ընթացքում սնունդ պատրաստելու համար օգտագործվող վառելիքի տեսակները (որպես առաջին տարրերակ)



Նույնն է պատկերը նաև ջեռուցման սեզոնից դուրս սնունդ պատրաստելու համար հարցվողների կողմից առավել հաճախ օգտագործվող վառելիքի պարագայում. դեպքերի գերակշիռ դեպքերում բնակիչները նշում են գազի մասին (80.5%):

Գծապատկեր 9. Հարցվողների կողմից ջեռուցման սեզոնից դուրս սնունդ պատրաստելու համար օգտագործվող վառելիքի տեսակները (որպես առաջին տարրերակ)




Ուշագրավ է, որ Գյուլագարակ համայնքի հարցվողների 33.3%-ը և Լոռի Բերդ համայնքի հարցվողների 25%-ն օգտագործում է վառելափայտ՝ սեզոնից դուրս սնունդ պատրաստելու համար: Սա կարելի է բացատրել համայնքների անտառամերձ լինելու և մատչելի վառելափայտի հասանելիության հանգամանքով:

Կենցաղային ջրի տաքացման համար օգտագործվող հիմնական վառելիքը գազն է՝ Ախուրյան համայնքում 35.2% և Եղվարդ համայնքում 78.6% ցուցանիշներով: Սակայն կենցաղային ջրի տաքացման համար հարցվողներն օգտագործում են նաև էլեկտրաէներգիա (գրեթե 12%) և արևային էներգիա (9%): Արևային էներգիան ավելի շատ է օգտագործվում Ախուրյան համայնքում (22.55%) և «Սարալանջ» համայնքների խմբում (15.6%): Էլեկտրաէներգիան նույնպես ավելի շատ է օգտագործվում Ախուրյան համայնքում (28.2%) և «Սարալանջ» համայնքների խմբում (11.7%):

Հատկանշական է, որ ուսումնասիրված անտառամերձ համայնքներում վառելափայտի օգտագործումը կենցաղային ջրի տաքացման համար բավական բարձր տոկոս է կազմում՝ Լոռի Բերդ (18.7%) և Գյուլագարակ (22.1%): Միննույն ժամանակ արևային էներգիայի օգտագործումը այդ նպատակով շատ փոքր տոկոս է կազմում:

Գծապատկեր 10. Կենցաղային ջրի տաքացման համար օգտագործվող վառելիքը



Ֆոկլոր խմբային քննարկումները ցույց տվեցին, որ հարցմանը մասնակցած բնակավայրերում բացի Զորավանից (ծղոտի) **բրիկետ օգտագործողները** շատ քիչ են եղել: Որպես հիմնական խոչընդոտ նշվել է տեղեկատվության և փորձի պակասը, բրիկետի հասանելիությունը և դրա բարձր գինը: Սեփական արտադրության ծղոտը բրիկետի հետ փոխանակելու հիմնական խոչընդոտներն են ծղոտի սակավությունը, դրա պահանջարկը շուկայում այլ գնորդների կողմից, ծղոտը բրիկետի արտադրամաս հասցնելու տեխնիկական խնդիրները: Որոշ բնակավայրերում հատկապես **կին ռեսպոնդենտները** պատրաստ կլինեին գոմաղբը փոխարինել բրիկետով, եթե ջերմատվությամբ այն մոտ լիներ գոմաղբին: Նշվել է, որ գոմաղբի պատրաստումը շատ աշխատատար է, իսկ բրիկետը հավանաբար էկոլոգիապես ավելի մաքուր և առողջության համար անվտաղ վառելիք է:

Հարցմանը մասնակցած բոլոր բնակավայրերում **արևային էներգիայի** օգտագործումը լիովին ընդունելի է: Առևային ջրատաքացուցիչներն առավել մեծ տարածում ունեն Շիրակի և Կոտայքի մարզերի հարցված բնակավայրերում և համեմատաբար ավելի քիչ՝ Լոռու մարզի հարցված բնակավայրերում: Դրա ավելի լայն տարածման հիմնական խոչընդոտը՝ նախնական ֆինանսական ներդրում կատարելու դժվարությունն է:


Կենսագազի մասին հարցվողները հիմնականում լավ տեղյակ չէին, օգտագործման փորձը բացակայում է, կենսագազի ստացումը աշխատատար է, ծախսարդյունավետությունը հարցական է: Բացի այդ, գոմաղբն անբավարար կլինի, քանի որ այն արդեն օգտագործվում է որպես վառելիք կամ պարարտանյութ:

Օգտագործվող վառելափայտի և գոմաղբի քանակը

Հարցվողների մոտավորապես 27%-ն օգտագործում է մինչև 5 մ3, 46%-ը՝ 5-10մ3, 17%-ը՝ 10-15 մ3


վառելափայտ, մինչդեռ հարցվողների 4.2%-ը վառելափայտ չի օգտագործում:

Գծապատկեր 11. Հարցվողների կողմից օգտագործվող վառելափայտի քանակը



Գոմաղբի պարագայում հարցվողների մոտ 25%-ը օգտագործում է մինչև 5 մ³, 22%-ը՝ 10-15 մ³, 11%-ը՝ 10-15 մ³ գոմաղբ, իսկ 33.4%-ը գոմաղբ չի օգտագործում:


Գծապատկեր 12. Հարցվողների կողմից օգտագործվող գոմաղբի քանակը



Գոմաղբի օգտագործումն ավելի պակաս տարածում ունի Լոռու համայնքներում: Ֆոկուսային խմբի քննարկումների ժամանակ հարցվողները նշեցին, որ օդի բարձր խոնավությունը խոչընդոտում է գոմաղբի չարացմանը:

Ստորև բերված գծապատկերում ներկայացվում են ջեռուցման համար տարբեր վառելիքի տեսակների ընտրության հարցում դեր խաղացող գործոնները:

Գծապատկեր 13. Ջեռուցման համար տարբեր վառելիք տեսակների ընտրության հարցում դեր խաղացող գործոնները




Վառելափայտի նախընտրության հարցում սպառողները նշել են մատչելիությունը (37.8%), հարմարավետությունը (17.5 %), այլընտրանքի բացակայությունը (16.9%) և հասանելիությունը (13.9 %):

Գոմաղբի նախընտրության հարցում առաջնային երեք գործոններն են մատչելիությունը (61.3 %), հասանելիությունը (22.3 %) և այլընտրանքի բացակայությունը (7.9%):

Գազի նախընտրության հարցում սպառողները նշել են հարմարավետությունը (55%), հասանելիությունը (15.4%) և մատչելիությունը (12.1%):

Մինչդեռ հարցվողների մոտ 40%-ն է բավարարված իրենց ջեռուցման համակարգի կողմից սպասվող վառելիքի քանակով, իսկ մոտ 25%-ն ընդհանրապես բավարարված չէ:

Գծապատկեր 14. Բավարարվածություն մակարդակը սպասված վառելիքի քանակից




Վառելափայտ սպառողների կառուցվածքում հարցվողների մոտ 91%-ը վառելափայտի համար վճարում է առձեռն այն գնելիս, իսկ մնացած մասը կատարում են հետաձգված վճարում: Գյուլագարակի համայնքում հարցվողների 30%-ը վառելափայտի դիմաց կատարում է հետաձգված վճարում: Գյուլագարակ և Լոռի Բերդ համայնքներում հարցվողների համապատասխանաբար 16%-ը և 13%-ը ձեռք է բերում վառելափայտը առանց վճարումների: Եղվարդ համայնքում հարցվողների 16%-ն օգտագործում է իր սեփական այգուց ստացված փայտը:

Գոմաղբ օգտագործողների շրջանում հարցվողների 7%-ը վճարում է կանխիկով այն գնելիս, 12%-ը՝ հետաձգված վճարման եղանակով, 42%-ն օգտագործում է իր սեփական անասունից ստացված գոմաղբը (չի վճարում գոմաղբի համար), իսկ հարցվողների 39%-ը գոմաղբ է ձեռք բերում առանց վճարելու: Գյուլագարակ և Լոռի Բերդ համայնքներում գոմաղբ օգտագործողների զգալի մասը (համապատասխանաբար 77% և 90%) ձեռք են բերում գոմաղբն առանց դրա դիմաց վճարելու, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ եղանակային պայմանները բարենպաստ չեն գոմաղբը չորացնելու համար, և գոմաղբի ավելցուկ ունեցող գյուղացիներն անվճար տրամադրում են այն իրենց հարևաններին և բարեկամներին:

Մինևույն ժամանակ հարցվողների մոտ 75%-ը հիմնականում պատրաստ է կատարել լրացուցիչ աշխատանք իրենց վառելիքի ծախսը նվազեցնելու համար:

Գծապատկեր 15. Վառելիքի ծախսը նվազեցնելու նպատակով լրացուցիչ ֆիզիկական աշխատանք կատարելու պատրաստակամությունը

Ես պատրաստ եմ լրացուցիչ ֆիզիկական աշխատանք կատարել, որպեսզի ավելի շատ էներգիա/վառելիք խնայեմ



Բոլոր բնակավայրերում ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ ռեսպոնդենտներից շատերի համար ամեցանկալի տարբերակը **բնական գազով և կենտրոնացված ջեռուցման համակարգով** տների ջեռուցումն է: Դա սահմանափակող հիմնական գործոններն են համակարգի տեղադրման նախնական ներդրման անհրաժեշտությունը և գազի բարձր գինը (որոշ դեպքերում համայնքում գազի բացակայությունը):

Կին հարցվողների համար հատկապես կարևոր է ջեռուցման հարմարավետությունը՝ տան ջեռուցվող մակերեսի ընդլայնում և ջեռուցման հետ կապված կենցաղային աշխատանքների թեթևացում: **Տղամարդ հարցվողների** համար առավել ցանկալի է մատչելի վառելիքի հասանելիությունը, նշում են վառելափայտի և քարածուխի ներմուծման և ավելի մատչելի գնով վաճառքի մասին: Կցանկանային, որպեսզի իրենց տարածաշրջանում լինեն ծղոտի բրիկետի արտադրություն (այն համայնքներում, որտեղ արտադրություն չկա):

Այլընտրանքային վառելիք

Շիրակի մարզում հարցվողները նշել են, որ իրենց կողմից լայնորեն օգտագործվող **գոմաղբի** հիմնական առավելությունն այն է, որ մատչելի է և հասանելի, հաճախ օգտագործվում է սեփական անասունների գոմորբը՝ անվճար: Սակայն որպես վառելիք գոմաղբն ունի նաև լուրջ թերություններ. դրա պատրաստելը չափազանց աշխատատար և ժամանակատար է, օգտագործումն անհարմարավետ է, տունը կեղտոտվում է: Ցանկալի է, որ այլընտրանքային վառելիքը լինի մատչելի (թեկուզ գոմաղբից թանկ, բայց փայտից մատչելի) և պակաս աշխատատար (քան գոմաղբն է):

Լոռու մարզում հարցվողների համար կարևոր է, որ **այլընտրանքային վառելիքը** լինի փայտից մատչելի, միննույն ժամանակ ունենա ավելի լավ ջերմատվություն: Հարցվողները պատրաստ են հավելյալ աշխատանք կատարել, սակայն այդ դեպքում վառելիքը պետք լինի առավել մատչելի, գրեթե անվճար: Հատկապես **կանայք** կարևորում են, որ այլընտրանքային վառելիքը լինի մաքուր և առողջության համար անվտանգ, չառաջացնի տհաճ հոտ:

Եղվաքո համայնքի բնակավայրերում հարցվողները պատրաստ են օգտագործել նոր **այլընտրանքային** վառելիք, քանի որ գոմաղբը պատրաստելու համար շատ ջանք և ժամանակ են գործադրում: Այլընտրանքի դեպքում կխնայեն իրենց ժամանակը և գողմաբն էլ ավելի շատ կօգտագործեն հողը պարարտացնելու համար:

Որպես ցանկալի այլընտրանք որոշ տեղեկում նշվել է քարածուխը, եթե այն լինի ավելի մատչելի, քան ներկայումս է:

Ֆոկուս խմբային գրեթե բոլոր քննարկումներում մասնակիցները նշել են, որ փորձում են **խնայել վառելիքը**: Սակայն դա միշտ չի հաջողվում, եթե հատկապես տանը կան երեխաներ կամ ջեռուցման սարքն անարդյունավետ է: Հարցվողները նշել են էներգախնայողության հետևյալ հիմնական եղանակները (*տարածվածության նվազման կարգով*). տան մասնակի ջեռուցում, ջեռուցման ժամերի կրճատում, գոմաղբի օգնությամբ միալար, անընդհատ կրակի ապահովում, ծղոտի հետ խառնված և մամլած գոմաղբի օգտագործում (տարածված է հատկապես Ախուրյանի բնակավայրերում),

վառարանի վրա կենցաղային ջրի տաքացում, ջերմամեկուսացում (մետաղապլաստե պատուհանների տեղադրում, պոլիէթիլենային թաղանթով պատուհանների ծածկում, առաստաղի ջերմամեկուսացում խճաքարով կամ գիպս-սովարաթղթով, պատերի հաստացում), էլեկտրական ջեռուցող սավանների օգտագործում և այլն:


Բազմաթիվ բնակավայրերում հարցվողները հնչեցրել են կարծիք, որ **վառելափայտը պետք է կիսաչոր լինի**, որպեսզի ավելի երկար այրվի և խնայվի: Այդ նպատակով պահեստավորելուց առաջ վառելափայտը մի քանի օր թողնում են անձրևի կամ ձյան տակ, օգտագործելուց անմիջապես առաջ այն ցողում են ջրով, վառարանի մեջ միաժամանակ դնում են չոր և կիսաչոր վառելափայտ:

Վերում ներկայացված վիճակագրական տվյալներից և ֆոկլուսային խմբի քննարկումներից կարելի է եզրակացնել, որ հարցվողների համար ընդունելի կլինի վառելափայտի այլընտրանքը, եթե այն ունենա առնվազն նույն արժեքը կամ լինի ավելի մատչելի (հաշվի առնելով օգտագործման համար հարմարավետության նույն մակարդակը): Իսկ գոմաղբ սպառողների մեծամասնությունը չի վճարում դրա դիմաց: Հետևաբար, դժվար է պատկերացնել, որ նրանց համար ընդունելի կլինի մի այլընտրանքային տարբերակ, որի դիմաց նրանք պատրաստ կլինեն վճարել, քանի դեռ ջեռուցուման նպատակային օգտագործումից բացի չկան դրա այլ նպատակով օգտագործման հստակ՝ նաև ֆինանսական օգուտներ:

Տան ջեռուցման սարքեր


Կոշտ կենսավառելիքով աշխատող տեղական արտադրության վառարաններն ու կաթսաները (կենտրոնացված ջեռուցման համակարգ) հարցվողների կողմից օգտագործվող հիմնական ջեռուցման սարքերն են: Հարցվողների 80%-ն օգտագործում է փայտով աշխատող վառարաններ, իսկ 15%-ը՝ կենսավառելիքով աշխատող կաթսաներ: Ջեռուցման այլ տեսակի սարքերը (գազով և էլեկտրաէներգիայով աշխատող ջեռուցիչներ, գազի կաթսա և այլն) փոքր մաս են կազմում հարցվողների շրջանում:

Գծապատկեր 16. Տան ջեռուցման համար օգտագործվող սարքեր (որպես առաջին օգտագործվող տարբերակ)



Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս 80.000 դրամ շուկայական արժեք ունեցող էներգախնայող վառարանի դիմաց հարցվողների վճարելու պատրաստակամությունը:

Գծապատկեր 17. Էներգաարդյունավետ վառարանի ձեռքբերման դիմաց վճարելու պատրաստակամությունը




Հարցվողների մեծամասնությունը՝ 91%-ը պատրաստ է վճարել ընդամենը մինչև 40.000 դրամ (առաջարկվող շուկայական գնի կեսը), 62.6%-ը՝ ընդամենը մինչև 20.000 դրամ, և միայն հարցվողների 9%-ն է պատրաստ վճարել առաջարկվող շուկայական գնի կեսից ավելին:

Տան ջեռուցման համակարգը փոխելու մտադրությունը

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է հարցվողների՝ իրենց տան ջեռուցման համակարգը փոխելու մտադրությունը:


Գծապատկեր 18. Տան ջեռուցման համակարգը փոխելու մտադրությունը



Վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվողների 19%-ը ցանկանում է ձեռք բերել էներգաարդյունավետ վառարան, 12.1%-ը ցանկանում են տեղադրել կենսազանգվածով աշխատող կաթսա, 10.6%-ը՝ գազի կաթսա, 9%-ը՝ արևային ջրատաքացուցիչ կամ արևային վահանակ, իսկ հարցվողների 46.7%-ը նշել է, որ մտադրություն չունի ոչինչ փոխել:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է տանը վառարան օգտագործող 299 հարցվողների մտադրությունը տան ջեռուցման համակարգը փոխելու վերաբերյալ:

Գծապատկեր 19. Տանը վառարան օգտագործող և այն փոխել ցանկացող հարցվողների մտադրությունը



Տան ջեռուցման համար վառարան օգտագործող 299 հարցվողներից 22%-ը պլանավորում է ձեռք բերել էներգաարդյունավետ վառարան, 14%-ը ցանկանում է անցնել վառելիքով/բրիկետով աշխատող կաթսայի, իսկ հարցվողների 10%-ը ցանկանում է անցնել գազով ջեռուցման համակարգի:


Գրեթե բոլոր բնակավայրերում ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներից շատերը նշել են, որ հետաքրքրված են **էներգաարդյունավետ սարքեր** ձեռք բերելու հարցում՝ էներգիա խնայելու համար: Շատերը ձգտում են ունենալ փայտով/գոմաղբով ջեռուցվող ինքնաշեն ջեռուցման կաթսա: Բոլոր բնակավայրերում **կին և տղամարդ** ռեսպոնդենտները նշել են էներգախնայող սարքեր ձեռք չբերելու հետևյալ հիմնական պատճառները. նախնական ֆինանսական ներդրում կատարելու դժվարություն, սարքերի վերաբերյալ տեղեկատվության և փորձի պակաս իրենց բնակավայրում, ինչպես նաև անվտանգություն դրանց արդյունավետության վերաբերյալ: Հարցման բնակավայրերում բավական տարածված են էներգախնայող լամպերը:

Վերոնշյալ վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ կենսազանգվածով աշխատող վառարաններ օգտագործող հարցվողների ջեռուցման սարքերի կամ համակարգի փոխարինումը սահմանափակող հիմնական գործոնը սկզբնական ներդրում կատարելու անհրաժեշտությունն է և վստահելի տեղեկության բացակայությունը: Մեծ է հավանականությունը, որ երաշխավորված որակով և հնարավորինս ցածր գնով էներգախնայող վառարանները (և այլ սարքերը) կարող են պահանջարկ ունենալ: Առկա հնարավորությունների վերաբերյալ իրազեկության բարձրացումը կարող է դիտարկվել կարևոր քայլ համայնքներում էներգաարդյունավետ սարքերը խթանելու համար:


Ժամանակի ծախսը ջեռուցման և վառելիքի հետ կապված գործողությունների համար

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է, թե որքան ժամանակ են ծախսում (ժամ/օր) հարցվողները սննդի պատրաստման, տան ջեռուցման և կենցաղային ջրի տաքացման վրա:

Գծապատկեր 20. Ժամանակի ծախսը, տղամարդիկ



Գծապատկեր 21. Ժամանակի ծախսը, կանայք



Մտնող պատրաստելու աշխատանքներում կանայք ծախսում են ավելի շատ ժամանակ, քան տղամարդիկ: Կանանց 88.6%-ը սննդի պատրաստման համար օրական ծախսում է մինչև 3 ժամ և միայն 6.2%-ը ժամանակ չի ծախսում դրա վրա: Տղամարդկանց 22%-ը սննդ պատրաստելու համար ծախսում է օրական 3 ժամ, իսկ 78%-ն ընդհանրապես չի առնչվում սննդի պատրաստման հետ:

Տղամարդիկ ավելի շատ ժամանակ են ծախսում **տան ջեռուցման սարքի աշխատանքի ապահովման համար**, քան կանայք: Տղամարդկանց 72.6%-ը ծախսում է օրական մինչև 3 ժամ, իսկ 8.6%-ն ընդհանրապես ժամանակ չի ծախսում դրա համար: Կանանց 51.3%-ն օրական ծախսում է մինչև 3 ժամ, իսկ 13%-ն ընդհանրապես ժամանակ չի ծախսում դրա համար: Սակայն, օրվա ընթացքում կանայք ավելի շատ ժամանակ են ծախսում այդ աշխատանքի համար, քան տղամարդիկ:


Տղամարդկանց 80.2%-ը և կանանց 50.3%-ը ժամանակ չի ծախսում **կենցաղային ջրի տաքացման վրա** (սա հավանաբար պայմանավորված է կենցաղային ջրի տաքացման համար գազի, էլեկտրականության և արևային էներգիայի օգտագործմամբ), իսկ կանանց 45.1%-ը և տղամարդկանց 17.1%-ը կենցաղային ջրի տաքացման վրա օրական ծախսում է մինչև 3 ժամ:

Ֆոնուսային խմբի քննարկումները ցույց տվեցին, որ այն մարդիկ, որոնք օրվա մեծ մասն անցկացնում են տանը, հաճախ են զբաղվում ջեռուցման հարցերով: Նրանք դա համարում են իրենց հիմնական զբաղմունքը և դժվարանում են գնահատել, թե որքան ժամանակ են հատկացնում ջեռուցումն սարքի աշխատանքի ապահովման համար: Սա վերաբերում է այն հարցվողներին, որոնք նշել են «3-10 ժամ և ավել» միջակայքը:

Փայտի և գունաղբի պահեստավորման համար ծախսվող ժամանակը

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է, թե որքան ժամանակ (օր) են ծախսում հարցվողները ձմռան սեզոնի համար վառելափայտի պատրաստման և պահեստավորման վրա: Ընդհանուր առմամբ, հարցվողների մի մասը փայտը կտրելու և պահեստավորելու աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն, իսկ ոմանք այդ աշխատանքների համար օգտագործում են վարձու աշխատուժ:

Գծապատկեր 22. Ջեռուցման սեզոնին անհրաժեշտ վառելափայտը պահեստավորելու համար ծախսվող ժամանակը




Տղամարդիկ, 3%-ն ընդհանրապես ժամանակ չի ծախսում վառելափայտի պահեստավորման վրա, 42%-ը՝ ծախսում է 1-3 օր, 35%-ը՝ 4-10 օր, իսկ 21%-ը՝ ավելի քան 10 օր: Կանայք, 29%-ն ընդհանրապես ժամանակ չի ծախսում վառելափայտի պահեստավորման վրա, 35%-ը ծախսում է 1-3 օր, 23 %-ը 4-10

օր, իսկ 13%-ն՝ ավելի քան 10 օր: Եզրակացությունն այն է, որ տղամարդիկ ավելի շատ են ներգրավված վառելիքայտի պահեստավորման աշխատանքներում և մի փոքր ավելի շատ ժամանակ են տրամադրում դրան:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է, թե որքան ժամանակ (օր) են ծախսում հարցվողները ձմռան սեզոնի համար գոմաղբի պատրաստման և պահեստավորման վրա: Պետք է նշել, որ հարցվողներն այս հարցին պատասխանելիս հաճախ նկատի են ունեցել այն ժամանակահատվածը, որի ընթացքում օրվա մեջ որոշակի ժամանակ են հատկացնում գոմաղբի պատրաստմանը: Բացի այդ, հարցվողների մի մասը գոմաղբի պատրաստման ողջ աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն, ինչը բավական ժամանակատար է, իսկ հարցման որոշ մասնակիցներ էլ գոմաղբը գնում են և ժամանակ են ծախսում միայն դրա պահեստավորման և հետագա օգտագործման վրա:

Գծապատկեր 23. Ձեռուցման սեզոնին անհրաժեշտ գոմաղբը պահեստավորելու համար ծախսվող ժամանակը




Գոմաղբի պարագայում տղամարդկանց 34.8%-ը և կանանց 40.9%-ն ընդհանրապես ժամանակ չի ծախսում գոմաղբի պատրաստման և պահեստավորման վրա: Այդ աշխատանքների համար որոշ ժամանակ հատկացնող հարցվողների մեծ մասը ծախսում է 51-100 օր՝ տղամարդկանց 33.7%-ը և կանանց 30.1%-ը: Տղամարդկանց 18.2%-ը և կանանց 18.7%-ը ծախսում են 1-50 օր, իսկ տղամարդկանց 13.4%-ը և կանանց 10.4%-ը՝ ավելի քան 100 օր: Այսպիսով, տղամարդկանց 51.9% և կանանց 48.8% ծախսում է մինչև 100 օր: Կարելի է եզրակացնել, որ կանայք համարյա նույնչափ ներգրավված են այս գործում, ինչքան և տղամարդիկ:


3.4 Հարցվողների կարծիքը ջեռուցման և վառելիքի տեսակների՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ

Հարցվողները գնահատել են տան ջեռուցման և սննդի պատրաստման համար իրենց կողմից օգտագործվող վառելիքի տեսակների՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը: Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, հարցվողների մոտ 75%-ը կարծում է, որ ջեռուցման համար իրենց կողմից օգտագործվող վառելիքը հիմնականում չի ազդում իրենց առողջության վրա, իսկ հարցվողների 85%-ը նշել է, որ սննդի պատրաստման համար իրենց կողմից օգտագործվող վառելիքը հիմնականում չի ազդում իրենց առողջության վրա:

Գծապատկեր 24. Ձեռուցման համար օգտագործվող վառելիքի ազդեցությունը մարդու առողջության վրա




Գծապատկեր 25. Մենդի պատրաստման համար օգտագործվող վառելիքի ազդեցությունը մարդու առողջության վրա




Միևնույն ժամանակ, հարցվողները 1-5 սանդղակով գնահատել են վառելիքի տեսակների հնարավոր բացասական ազդեցությունը մարդկանց առողջության վրա, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես ազդեցություն չունի», 5-ը՝ «շատ մեծ ազդեցություն ունի», իսկ 0-ն՝ «չգիտեմ»:

Գծապատկեր 26. Օգտագործվող վառելիքի տեսակների հնարավոր բացասական ազդեցությունը մարդու առողջության վրա, տղամարդիկ




Գծապատկեր 27. Օգտագործվող վառելիքի տեսակների հնարավոր բացասական ազդեցությունը մարդու առողջության վրա, կանայք



Ընդհանուր առմամբ, հարցվողները կարծում են, որ ջեռուցման համար օգտագործվող վառելիքային ունի ավելի քիչ բացասական ազդեցություն մարդու առողջության վրա, քան գոմաղբը: Տղամարդկանց 55%-ը և կանանց 38.2%-ը նշել են գոմաղբի մեծ ազդեցության մասին (4-5 սանդղակ): Ընդհանուր առմամբ, տղամարդկանց կարծիքով վառելիքային ու գոմաղբը ավելի շատ բացասական ազդեցություն ունեն, իսկ կանանց գնահատմամբ՝ ավելի քիչ: Տղամարդկանց և կանանց ավելի քան 60%-ը տեղյակ չէ բրիկետի ազդեցության մասին, քանի որ, հավանաբար, չեն օգտագործել այն::

Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս օգտագործվող վառելիքի ազդեցությունը ընտանիքի անդամների առողջության վրա (հարցվողները կարող էին նշել մի քանի պատասխան): Շնչուղիների զրգոման հետ կապված (հարցվողների մոտ 40%) և աչքերի զրգոման հետ կապված խնդիրները (հարցվողների 22%) եղել են ամենատարածված պատասխանները, որոնց հաջորդել են թոքային հիվանդություններն ու մաշկի զրգոման հետ կապված խնդիրները:

Գծապատկեր 28. Օգտագործվող վառելիքի հետ կապված առողջական խնդիրներ



Գրեթե բոլոր բնակավայրերում ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները նշել են, որ հատկապես տանը տեղադրված վառարաններում գոմաղբի և փայտի օգտագործման դեպքում

առաջանում է ծուխ, փոշի և տհաճ հոտ՝ բացասական հետևանքներ թողնելով մարդկանց **առողջության** վրա (շնչառական խնդիրներ, ալերգիա, աչքերի բորբոքում և այլն):

Կանանց կարծիքով փայտի վառարանով ջեռուցումը չորացնում է տան օդը: Առողջությանը վնաս է հասցնում հատկապես գոմաղբից առաջացող մոխրի մաքրելը: Վառելիքը խնայելու կամ կրակին չհետևելու պատճառով տանը ջերմության տատանումները կարող են ընտանիքում մրսածության և հիվանդության պատճառ դառնալ: Կարևորվել է ջեռուցման և սնունդ պատրաստելու **անվտանգությունը** և նորմալ աշխատող օդափոխության համակարգի առկայությունը:


Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ բազմաթիվ բնակավայրերում նշել են, որ **ռետինե, պլաստիկ իրեր, անվադողեր և նման նյութեր, երբեմն կենցաղային** աղբ այրում են ավելի շատ տանից դուրս տեղադրված ինքնաշեն **կաթսաներում**: Երևույթի տարածվածությունը տարբեր է տարբեր բնակավայրերում:

Որոշ դեպքերում այրում են կենցաղային աղբից ազատվելու համար, հատկապես եթե աղբահանության խնդիր կա, սակայն երբեմն նաև սովորության ուժով:


Տան ներսում տեղադրված վառարանում նման նյութեր օգտագործում են **ֆինանսապես** անապահով ընտանիքները, նաև եթե ձեռք բերված վառելիքայտը և այլ վառելիքը ավարտվում է: **Հատկապես կին** հարցվողները նշել են, որ գիտակցում են դրա բացասական հետևանքները մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա և այդ քայլին գնում են ստիպված, երբ այլընտրանք չեն ունենում:

Հարցվողները նաև 1-5 սանդղակով գնահատել են վառելիքի տեսակների հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես ազդեցություն չունի», 5-ը՝ «շատ մեծ ազդեցություն ունի», իսկ 0-ն՝ «չգիտեմ»:

Գծապատկեր 29. Ջեռուցման և օգտագործվող վառելիքի տեսակների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, տղամարդիկ



Գծապատկեր 30. Ձեռուցման և օգտագործվող վառելիքի տեսակների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, կանայք




Հարցվողների կեսից ավելի քիչ տոկոսը, մասնավորապես տղամարդկանց 44.4%-ը և կանանց 35.3%-ը կարծում են, որ վառելափայտի օգտագործումը մեծ ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա (4-5 սանդղակ): Նույնը կարելի է ասել գոմաղբի մասին: Տղամարդկանց 42.5%-ը և կանանց 42.3%-ը համարում են, որ գոմաղբի օգտագործումը մեծապես ազդում է շրջակա միջավայրի վրա: Տղամարդկանց և կանանց 50-60%-ը տեղյակ չեն բրիկետների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին, ինչը հաստատում է, որ նրանք չեն օգտվել այդ վառելիքի տեսակից և լավ տեղեկացված չեն դրա մասին:

Բոլոր ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները մտահոգություն են արտահայտել անտառների կրճատման և անտառի վիճակի վատթարացման վերաբերյալ, նրանք անհանգստանում են, որ վառելափայտն ապագայում կարող է անհասանելի և ավելի թանկ լինել:

3.5 Տեղեկացվածություն, որոշումների կայացում, նոր տեխնոլոգիաներ

Հարցվողների մեծամասնությունը ցանկություն է հայտնել մասնակցել իրենց տանը կամ համայնքում էներգաարդյունավետության վերաբերյալ խմբային քննարկումներին: Ստորև բերված գծապատկերից երևում է, որ տղամարդկանց 85.5%-ը և կանանց 75%-ը հետաքրքրված են խմբային քննարկումների մասնակցությամբ: Մասնակցության վերաբերյալ որոշում կայացնելու համար կանայք (11.5%) փոքր-ինչ ավելի շատ տեղեկատվության կարիք ունեն, քան տղամարդիկ (4.8%):


Գծապատկեր 31. Էներգաարդյունավետության վերաբերյալ խմբային քննարկումներին մասնակցելու պատրաստակամությունը




Համարյա բոլոր բնակավայրերում ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների կարծիքով էներգախնայողության մասին **տեղեկատվությունը** հիմնականում հասանելի է: Առավել վստահելի են համարվում համազյուղացիների կողմից փորձարկված նորությունները: Որպես էներգաարդյունավետության և էներգախնայողության վերաբերյալ **տեղեկատվության աղբյուրներ** նշվել են (*աղբյուրի տարածվածության նվազման կարգով*). տեղեկություններ ծանոթներից, բարեկամներից և ընկերներից, արևային էներգիայի սարքավորումներ առաջարկող ընկերությունների ներկայացուցիչներ, համացանց, հեռուստատեսություն, արտագնա աշխատանքի ընթացքում ստացված տեղեկություններ:

Ստորև ներկայացված գծապատկերները ցույց են տալիս, թե որքանով են հարցվողները կիսում իրենց կարծիքը էներգիայի վերաբերյալ: Մասնավորապես, տղամարդկանց 82%-ը և կանանց 63%-ը համայնքային հանդիպումների ժամանակ հիմնականում հայտնում են էներգիայի վերաբերյալ իրենց կարծիքները:

Գծապատկեր 32. Էներգիայի վերաբերյալ կարծիքի փոխանակումը հարևանների հետ




Գծապատկեր 33. Համայնքային հանդիպումների ժամանակ էներգիայի վերաբերյալ կարծիքի փոխանակումը




Ինչպես կարելի է տեսնել ստորև ներկայացված գծապատկերներից, հարցվողների ընդհանուր թվի 66%-ը հետաքրքրված է էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաներով, տղամարդկանց շրջանում այդ հետաքրքրությունը մի փոքր ավելի շատ է դրսևորվում, քան կանանց մոտ: Մակայն հարցվողների ավելի քան 70%-ն առաջիններից չեն, որ կիրառում են էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաները:

Գծապատկեր 34. Հետաքրքրությունը էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաներով




Գծապատկեր 35. Էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաների օգտագործումը



Հարցվողների ճնշող մեծամասնությունը (87%) հիմնականում մասնակցում է իրենց ընտանիքներում էներգիայի վերաբերյալ որոշումների կայացմանը: Մակայն տղամարդկանց և կանանց մասնակցության միջև կա տարբերություն՝ համապատասխանաբար 96% և 78% ցուցանիշով:

Գծապատկեր 36. Մասնակցությունը որոշումների կայացմանը էներգիայի վերաբերյալ



4. Հիմնական եզրակացություններ ու առաջարկներ

4.1 Եզրակացություններ

Ջեռուցման մակերես, ջերմամեկուսացում և բավարարվածություն ջեռուցման մակարդակից

Ձմռան սեզոնին հարցվողները ջեռուցում են իրենց տների 62-81%-ը: Հարցվողների 22%-ի տներն ընդհանրապես **ջերմամեկուսացված** չեն, հարցվողների 36%-ից ավելին նշել է ջերմամեկուսացման միայն մեկ բաղադրիչի, մոտ 26%-ը՝ 2 և մոտ 11%-ը՝ 3 բաղադրիչի մասին, իսկ ջերմամեկուսացման 4 բաղադրիչի մասին նշել է հարցվողների մոտ 4%-ը: Տների ամենահաճախ ջերմամեկուսացվող հատվածներն են լուսամուտները, ապա՝ առաստաղը: Հարցվողների միայն կեսն է հիմնականում բավարարված տան ներսի ջերմաստիճանով, իսկ 15%-ն ընդհանրապես բավարարված չէ:

Ջեռուցման համար վառելափայտի և գոմաղբի օգտագործում

Հարցվողների գրեթե 96%-ը ջեռուցման համար օգտագործում է վառելափայտ, իսկ 66%-ը՝ գոմաղբ: Որպես ջեռուցման առաջին օգտագործվող տարբերակ **վառելափայտ** է օգտագործում հարցվողների 72.6%-ը, իսկ հարցվողների 23%-ն այն օգտագործում է որպես ջեռուցման համար երկրորդ և երրորդ տարբերակ: **Գոմաղբը** որպես ջեռուցման առաջին տարբերակ օգտագործվում է հարցվողների 20.5%-ի կողմից, իսկ հարցվողների 45.5%-ն այն օգտագործում է որպես երկրորդ և երրորդ տարբերակ:

Կոշտ կենսազանգվածի վառելիք օգտագործողների շրջանում **վառելափայտն** առաջին օգտագործվող տարբերակ է եղել հարցմանը մասնակցած բոլոր համայնքներում, բացի Ախուրյան համայնքից: Այդ համայնքում վառելափայտի օգտագործման ցուցանիշը կազմել է 47%, իսկ մնացած բոլոր համայնքներում՝ ավելի քան 70%, ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գյուլագարակ համայնքում՝ 91,4% (անտառամերձ համայնք): Հարցվողների մոտ 27%-ն օգտագործում է մինչև 5մ³, իսկ հարցվողների 46%-ը՝ 5-10մ³ վառելափայտ:

Գոմաղբն հաճախ է օգտագործվում հատկապես Ախուրյան համայնքում (46%), «Սարալանջ» համայնքային խմբում (19.3%) և Եղվարդ համայնքում (19.6%), ինչը պայմանավորված է այդտեղ անասնապահության լայն տարածմամբ: Գոմաղբի օգտագործումն անտառամերձ տարածքներում ավելի քիչ նախընտրելի է, Գյուլագարակի համայնքում այդ ցուցանիշը կազմում է 4.9%, իսկ Լոռի Բերդ համայնքում՝ 10.7%: Հարցվողների մոտ 25%-ն օգտագործում է մինչև 5մ³, 22%-ը՝ 10-15մ³, 11%-ը՝ 10-15 մ³ գոմաղբ, իսկ 33.4%-ը գոմաղբ չի օգտագործում:

Հարցվողների միայն մոտ 40%-ն է բավարարված իրենց ջեռուցման համակարգի կողմից սպառվող վառելիքի քանակով, իսկ մոտ 25%-ն ընդհանրապես բավարարված չէ:

Ջեռուցման ամենանախընտրելի տարբերակը գազով աշխատող կենտրոնացված ջեռուցման համակարգն է, իսկ սկզբնական ներդրումի անհրաժեշտությունն ու գազի բարձր գինը հիմնական սահմանափակող գործոններն են:

Ընդհանուր առմամբ վառելափայտը և գոմաղբը լայնորեն օգտագործվում են ջեռուցման նպատակով: Հարցվողների կարծիքով (ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներ) ուսումնասիրությունում ներառված համայնքներում ջեռուցումն ապահովելու համար բնակչության 60-95%-ը օգտագործում է վառելափայտ, 10-30%՝ գոմաղբ և 5-20%՝ գազ: Մասնաբաժինները տարբեր են տարբեր համայնքներում՝ կախված հեռավորությունից անտառից, անասնապահության զարգացման մակարդակից և համայնքում գազի առկայությունից:

Մննդի պատրաստում ու կենցաղային ջրի տաքացում

Մննդի պատրաստման համար հարցվողներն ամենից հաճախ օգտագործում են գազ ինչպես ջեռուցման սեզոնին (72.9%), այնպես էլ ջեռուցման սեզոնից դուրս (80.5%) : Անտառամերձ համայնքներում հարցվողները մննդի պատրաստման համար ավելի շատ վառելափայտ են օգտագործում ջեռուցման զեզոնից դուրս, Գյուլագարակ համայնքում այդ ցուցանիշը կազմում է 33.3%, իսկ Լոռի Բերդ համայնքում՝ 25%:

Կենցաղային ջրի տաքացման համար օգտագործվող հիմնական վառելիքը նույնպես գազն է՝ Ախուրյան համայնքում 35.2% և Եղվարդ համայնքում 78.6% ցուցանիշներով: Կենցաղային ջրի տաքացման համար հարցվողներն օգտագործում են նաև էլեկտրաէներգիա (գրեթե 12%) և արևային էներգիա (9%): Արևային էներգիան ավելի շատ է օգտագործվում Ախուրյան համայնքում (22.55%) և «Սարալանջ» համայնքների խմբում (15.6%): Ուսումնասիրված անտառամերձ համայնքներում վառելավիայտի օգտագործումը կենցաղային ջրի տաքացման համար բավական մեծ է՝ Լոռի Բերդ (18.7%) և Գյուլագարակ (22.1%), իսկ արևային էներգիայի օգտագործումը շատ փոքր տոկոս է կազմում:

Ջեռուցման համար վառելիքի ընտրություն ու խնայողություն

Վառելավիայտի նախընտրության հարցում որպես հիմնական գործոններ սպառողները նշել են մատչելիությունը (37.8%), հարմարավետությունը (17.5%), այլընտրանքի բացակայությունը (16.9%) և հասանելիությունը (13.9 %): **Գոմաղբի** նախընտրության հարցում հիմնական գործոններն են մատչելիությունը (61.3 %), հասանելիությունը (22.3%) և այլընտրանքի բացակայությունը (7.9%): **Գազի** նախընտրության հարցում սպառողները նշել են հարմարավետության (55%), հասանելիության (15.4%) և մատչելիության (12.1%) գործոնները: **Շղոսի բրիկետների** օգտագործումը շատ սահմանափակ է: Ըստ հարցվողների՝ հիմնական խոչընդոտները տեղեկության ու փորձի պակասն է, ինչպես նաև բրիկետների հասանելիությունն ու դրա բարձր գինը: Մատչելի այլընտրանքի առկայության դեպքում հարցվողները կօգտագործեն գոմաղբը ոչ թե ջեռուցման նպատակով, այլ որպես պարարտանյութ:

Վառելավիայտ օգտագործող հարցվողների ճնշող մեծամասնությունը գնում է այն (վճարում է դրա դիմաց): Մինչդեռ գոմաղբ օգտագործողների միայն 20%-ն է վճարում դրա դիմաց, հարցվողների մյուս մասը ձեռք է բերում այն անվճար: Հարցվողների մոտ 75%-ը հիմնականում պատրաստ է կատարել լրացուցիչ աշխատանք իրենց վառելիքի ծախսը նվազեցնելու համար:

Կարելի է եզրակացնել, որ հարցվողների համար ընդունելի կլինի վառելավիայտի այլընտրանքը, եթե այն ունենա առնվազն նույն արժեքը կամ լինի վառելավիայտից ավելի մատչելի հաշվի առնելով օգտագործման համար հարմարավետության նույն մակարդակը: Մինչդեռ դժվար է պատկերացնել, որ գոմաղբ օգտագործողների համար ընդունելի կլինի մի այլընտրանքային տարբերակ, որի դիմաց նրանք պատրաստ կլինեն վճարել, քանի դեռ ջեռուցուման նպատակային օգտագործումից բացի չկան դրա այլ նպատակով օգտագործման հստակ օգուտներ՝ նաև ֆինանսական:

Հարցվողները տարբեր մեթոդներով հնարավորինս խնայում են վառելիքը: Հաճախ հարցվողների շրջանում կա սխալ պատկերացում, որ կիսաչոր փայտն ավելի արդյունավետ է, քան պատշաճ կերպով չորացված փայտը, քանի որ այն ավելի երկար է այրվում:

Ջեռուցման սարքեր

Հարցվողների մոտ 80%-ն օգտագործում է փայտով աշխատող տեղական արտադրության վառարաններ, իսկ 15%-ը՝ կենսավառելիքով աշխատող կաթսաներ: Էներգաարդյունավետ վառարան գնելու համար հարցվողների մեծամասնությունը՝ 91%-ը պատրաստ է վճարել մինչև առաջարկվող շուկայական գնի (80.000 դրամ) կեսը, իսկ հարցվողների 62.6% պատրաստ է վճարել միայն գնի 25%-ը:

Տան ջեռուցման համար վառարան օգտագործող հարցվողների 22%-ը պլանավորում է ձեռք բերել էներգաարդյունավետ վառարան, 14%-ը ցանկանում է անցնել վառելավիայտով/բրիկետով աշխատող կաթսայի, իսկ հարցվողների 10%-ը ցանկանում է անցնել գազի ջեռուցման համակարգի: Էներգաարդյունավետ սարքեր ձեռք չբերելու հիմնական պատճառները ներառում են նախնական ֆինանսական ներդրում կատարելու անհրաժեշտությունը, սարքերի վերաբերյալ տեղեկության և փորձի պակասը և անվստահությունը դրանց արդյունավետության վերաբերյալ:

Մեծ է հավանականությունը, որ երաշխավորված որակով և հնարավորինս ցածր գնով էներգաարդյունավետ վառարանները (այլ սարքերը) կիրացվեն: Առկա հնարավորություններ

վերաբերյալ իրազեկության բարձրացումը կարող է դիտարկվել կարևոր քայլ համայնքներում էներգաարդյունավետ սարքերը խթանելու համար:

Տան ջեռուցման սարքի աշխատանքի ապահովման և վառելիքի պատրաստման համար ժամանակի ծախսը

Ջեռուցումը վառելափայտով և գոմաղբով որոշակի անհարմարություններ է ստեղծում տնային տնտեսությունների համար, ներառյալ վառելիքի նախապատրաստման և ջեռուցման սարքի աշխատանքի ապահովման հարցերը:

Տղամարդիկ ավելի շատ են ներգրավված **տան ջեռուցման սարքի աշխատանքի ապահովման հարցերում**. տղամարդկանց 72.6%-ը դրա համար տրամադրում է օրական 3 ժամ և 8.6%-ը՝ դրանով չի զբաղվում, մինչդեռ կանանց 51.3%-ը դրա համար տրամադրում է օրական 3 ժամ և 13%-ը դրանով չի զբաղվում: Միևնույն ժամանակ կանայք ավելի շատ ժամանակ են տրամադրում, քան տղամարդիկ:

Վառելափայտի պատրաստման գործում ավելի շատ ներգրավված են տղամարդիկ և նրանք մի փոքր ավելի շատ ժամանակ են հատկացնում. տղամարդկանց 3%-ը և կանանց 29%-ը չեն ներգրավված այդ գործում, տղամարդկանց 42%-ը և կանանց 35%-ը՝ ծախսում են տարվա ընթացքում 1-3 օր և տղամարդկանց 35%-ը և կանանց 23%-ը՝ 4-10 օր:

Գոմաղբի պատրաստման համար տղամարդկանց 51.9%-ը և կանանց 48.8%-ը ծախսում են տարեկան մինչև 100 օր (այդքան օրվա ընթացքում տրամադրում են որոշակի ժամանակ այդ գործին): Այսպես, կանայք համարյա չույնքան ժամանակ են տրամադրում գոմաղբի նախապատրաստմանը և պահեստավորմանը, ինչքան տղամարդիկ: Ըստ հարցվողների՝ գոմաղբի պատրաստումը շատ աշխատատար և ժամանակատար գործ է:

Մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը

Հարցվողների մոտ 75%-ը կարծում է, որ ջեռուցման համար իրենց կողմից օգտագործվող վառելիքը հիմնականում չի ազդում իրենց **առողջության** վրա: Ընդհանուր առմամբ, հարցվողները կարծում են, որ ջեռուցման համար վառելափայտի օգտագործումն ավելի քիչ ազդեցություն ունի մարդու առողջության վրա, քան գոմաղբի օգտագործումը՝ տղամարդկանց 55%-ը և կանանց 38.2%-ը նշել են գոմաղբի մեծ ազդեցության մասին: Ընդհանուր առմամբ, տղամարդկանց կարծիքով վառելափայտն ու գոմաղբը ավելի շատ բացասական ազդեցություն ունեն, իսկ կանանց գնահատմամբ՝ ավելի քիչ: Մակայն, կանայք ավելի շատ կարևորել են վառելիքի մաքուր և առողջության համար անվտանգ լինելու գործոնը: Շնչուղիների և աչքերի գրգռման հետ կապված խնդիրները եղել են ամենատարածված պատասխանները, որոնց հաջորդել են թոքային հիվանդություններն ու մաշկի գրգռման հետ կապված խնդիրները:

Որոշ բնակավայրերում տանից դուրս տեղադրված կենսազանգվածով աշխատող կաթսաներում որպես վառելիք օգտագործում են **պլաստիկե, ռետինե իրեր, կենցաղային աղբ** և նման այլ նյութեր: Տան ներսում տեղադրված վառարանում նման նյութերի օգտագործումը պայմանավորված է ջեռուցման համար այլընտրանքի բացակայությամբ, հատկապես սոցիալապես անապահով ընտանիքներում: Հատկապես կին հարցվողները գիտակցում են բացասական հետևանքները մարդու առողջության վրա, երբ նման իրերը օգտագործվում են որպես վառելիք:

Ընդհանուր հարցվողների կեսից ավելի քիչ տոկոսը (տղամարդկանց 44.4% և կանանց 35.3%-ը) կարծում է, որ վառելափայտի օգտագործումը մեծ ազդեցություն ունի **շրջակա միջավայրի** վրա: Հարցվողների ավելի քան 40%-ը համարում է, որ վառելիքի նպատակով գոմաղբի օգտագործումը մեծապես ազդում է շրջակա միջավայրի վրա: Մասնակիցները շատ մտահոգված են անտառների կրճատմամբ և անտառի վիճակի վատթարացմամբ, նրանք անհանգստանում են, որ վառելափայտն ապագայում կարող է անհասանելի և ավելի թանկ լինել:

Տեղեկացվածություն և որոշումների կայացում

Հարցվողների մեծամասնությունը ցանկություն է հայտնել մասնակցել իրենց տանը կամ համայնքում էներգաարդյունավետության վերաբերյալ խմբային քննարկումներին: Տղամարդիկ (82%) համայնքային հանդիպումների ժամանակ ավելի շատ են կիսում էներգիայի վերաբերյալ իրենց կարծիքը, քան կանայք (63%): Հարցվողների մոտ 50%-ը համայնքային հանդիպումների ժամանակ կիսում է էներգիայի վերաբերյալ իրենց կարծիքը:

Ընդհանուր առմամբ, հարցվողների 66%-ը հետաքրքրված է էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաներով, տղամարդկանց մոտ այդ հետաքրքրությունը մի փոքր ավելի շատ է դրսևորվում, քան կանանց մոտ: Մինչդեռ հարցվողների ավելի քան 70%-ն առաջիններից մեկը չէ, որ կիրառում է էներգիայի ոլորտի նոր տեխնոլոգիաները:

Հարցվողների մեծամասնությունը (87%) հիմնականում մասնակցում է իրենց ընտանիքներում էներգիայի վերաբերյալ **որոշումների կայացմանը**: Առկա է տարբերություն տղամարդկանց և կանանց մասնակցության միջև՝ համապատասխանաբար 96% և 78% ցուցանիշներով:

4.2 Առաջարկություններ

1. Ջեռուցման ներկայիս պրակտիկաներն ավելի կայուն մոտեցումներով չփոխարինելու հիմնական պատճառը ջեռուցման համակարգը փոխելու կամ այլընտրանքային վառելիքի անցնելու նպատակով սկզբնական ներդրում կատարելու համար ֆինանսական ռեսուրսների բացակայությունն է: Անհրաժեշտ են հասանելի և մատչելի այլընտրանքային վառելիք և արդյունավետ ջեռուցման սարքեր՝ գյուղական բնակավայրերում վառելափայտի և գոմաղբի օգտագործումը նվազեցնելու համար: Այլընտրանքները պետք է ֆինանսական տեսանկյունից լինեն օգտագործվող վառելիքի այլ տեսակների կամ սարքերի ընթացիկ շուկայական գների միջակայքում, որպեսզի լայնորեն ընդունվեն և օգտագործվեն, քանի դեռ դրանք չունեն լրացուցիչ առավելություններ (հարմարավետություն, ժամանակի խնայողություն), որոնք ընդունելի կլինեն որոշ սպառողների համար և վերջիններս պատրաստ կլինեն վճարել դրանց դիմաց:

2. Անհրաժեշտ է ունենալ հասանելի ֆինանսավորում և ֆինանսական մեխանիզմներ՝ խրախուսելու գյուղական բնակչությանը իրենց SS-ներում անցում կատարել էներգաարդյունավետությանն ու այլընտրանքային վառելիքին: Դա ներառում է ԷԱ/ԱԷ լուծումներ, որոնք պահանջում են ավելի մեծ ֆինանսական ներդրում, սակայն կարող են նաև ապահովել վառելափայտի և գոմարային երկարաժամկետ խնայողություններ, ինչպես, օրինակ, տների ջերմամեկուսացումը: Գյուղական բնակչության ցածր եկամուտ ունեցող հատվածի համար պետք է լինեն տարբերակված մոտեցում և հատուկ ծրագրեր, որոնք կապահովեն, որ բնակչությունը որպես վառելիք չօգտագործի իրենց առողջության և շրջակա միջավայրի համար ռիսկեր պարունակող միջոցներ:

3. ԷԱ/ԱԷ վերաբրյալ իրազեկության բարձրացումն ու հզորությունների ստեղծումը պետք է լինեն գյուղերում էներգիային առնչվող գործողությունների կարևոր բաղադրիչները, որոնք պետք է հիմնված լինել փորձված և հուսալի տեղեկատվության և հաջողված օրինակների վրա, որպեսզի ընդօրինակվեն: Էներգիային առնչվող հարցերի շուրջ կանանց իրազեկելն ու կրթելը կարող է ազդեցություն ունենալ տնային տնտեսության և համայնքային մակարդակում:

4. ԷԱ/ԱԷ խթանմանն ու վառելափայտի/գոմաղբի օգտագործման նվազեցմանն ուղղված գործողություններն ենթադրում են օգուտներ ընտանիքների և մասնավորապես կանանց համար: Հետևաբար, պետք է ուսումնասիրվեն ու օգտագործվեն բոլոր հնարավորությունները՝ կոշտ կենսավառելիքով ներկայիս ջեռուցման պրակտիկաներին վերաբերող կենցաղային բեռը նվազեցնելու համար:

Հավելված 1. Հարցվողների կարծիքը ջեռուցման համար վառելիքի տարբեր տեսակների օգտագործման վերաբերյալ՝ ըստ համայնքների

Բնակչության կողմից ջեռուցման համար օգտագործվող վառելիքի տարբեր տեսակների մասնաբաժինները՝ ըստ ֆոկլուս խմբային քննարկումների մասնակիցների:

*Նշում. * գազի մատակարարում չունեցող համայնքներ, Փոքր Մանթաշ՝ մասնակի գազամատակարարում*

Ախուրյան համայնքի բնակավայրեր	
Այգաբաց	Փայտ և գոմաղբ՝ 60-80%, գազ՝ 20-30%, էլ.էներգիա՝ 10%
Արևիկ	Գազ՝ 40-50%, փայտ և գոմաղբ՝ 50%
Բասեն*	Գոմաղբ և փայտ՝ 60-80%, գոմաղբ՝ 20-40%
Կամո	Գոմաղբ՝ 60%, գոմաղբ և փայտ՝ 30%, գազ՝ 10-30%
Կառնուտ	Փայտ և գոմաղբ՝ 20%, գոմաղբ՝ 80%
Հովիտ	Գոմաղբ և փայտ՝ 60%, գոմաղբ՝ 40%, քարածուխ՝ 3%
Ջրառատ*	Փայտ և գոմաղբ՝ 90%, գոմաղբ՝ 10%

Շիրակի մարզի 5 չխոշորացված համայնքներ	
Հառիճ	Գոմաղբ՝ 80-90%, փայտ և կոն՝ 10-20%
Մեծ Մանթաշ	Փայտ և գոմաղբ՝ 80%, գազ՝ 15-20%
Նահապետավան	Փայտ և գոմաղբ՝ 70-80%, գոմաղբ՝ 30%, գազ՝ 10%
Սարալանջ	Փայտ և գոմաղբ՝ 80-90%, գազ՝ 10-20%
Փոքր Մանթաշ*	Փայտ և գոմաղբ՝ 70-80%, գոմաղբ՝ 10%, գազ՝ 5-10%, քարածուխ՝ 5-10%

Գյուլագարակ համայնքի բնակավայրեր	
Ամրակից	Փայտ՝ 60%, փայտ և գոմաղբ՝ 30%, գազ՝ 10%
Գարգառ	Փայտ՝ 80-90%, գազ՝ 10-15%, գոմաղբ՝ շատ քիչ
Գյուլագարակ	Փայտ՝ 75-85%, գոմաղբ՝ 5%, գազ՝ 20%
Կուրթան	Փայտ՝ 80-90%, գոմաղբ՝ 20%
Հոբարձի	Փայտ՝ 90%, գոմաղբ՝ 10%, գազ՝ 10-20%
Պուշկինո	Փայտ՝ 90-100%, գոմաղբ՝ շատ քիչ
Վարդաբլուր	Փայտ և գոմաղբ՝ 80-90%, գազ՝ 10%

Լոռի Բերդ համայնքի բնակավայրեր	
Ագարակ	Գոմաղբ և փայտ՝ 85-90%, գազ՝ 10-15%
Բովաձոր	Փայտ և գոմաղբ՝ 90%, գազ՝ 10%
Լեջան	Փայտ՝ 50%, փայտ և գոմաղբ՝ 30%, գազ՝ 15-20%
Լոռի բերդ	Փայտ՝ 80%, գազ՝ 10-15%, գոմաղբ՝ շատ քիչ
Կողես	Փայտ՝ 85-95%, փայտ և գոմաղբ՝ 5%, գազ՝ 5-10%
Յաղդան	Փայտ՝ 80-90%, գազ՝ 10%
Ուռուտ	Փայտ և գոմաղբ՝ 90-95%, գազ՝ 5-10%
Սվերդլով	Փայտ և գոմաղբ՝ 60-80%, գոմաղբ՝ 30%, գազ կամ էլ.էներգիա՝ 10-20%

Եղվարդ համայնքի բնակավայրեր	
Արագյուղ	Փայտ և գոմաղբ՝ 70-80%, գազ՝ 20%, բրիկետ՝ 5%
Բուժական*	Փայտ և գոմաղբ՝ 80-90%, գոմաղբ՝ 10-20%
Զորավան	Փայտ և գոմաղբ՝ 70%, գազ՝ 30%
Սարալանջ*	Փայտ և գոմաղբ՝ 90%, բրիկետ՝ շատ քիչ



ENVIRONMENT, CLIMATE, OPPORTUNITIES
for people and nature

Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ECOserve)

Հանրապետության 59, 9-րդ հարկ 0010
Երևան, ՀՀ
Ֆեռ.՝ +374 (0)10 51 00 65
Էլ հասցե՝ ECOserve@giz.de
Կայք՝ www.giz.de; www.biodivers-southcaucasus.org

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ)